առաքելոյ գլխատանս, ի հայրապետութեան Ս. Աթոռոյս Տէր Գրիգորին. ի թվին ՌՁԲ (=1633) (Մատ. Ցուց. Թ. 5. Հա. 1892. էջ 111—113), 4⁰— Աւետարան մը 1634ին. 5⁰— Ցայսմաւուրք 1638ին Գրիգոր Պարոնտէր պտրք·ին համար. (ՄՁ. Թ. 1919). 6⁰— Աւետարան, ՌՁԹ (=1640)ին Պարոնտէր պտրք·ին համար. 7⁰— Աւետարան, ՌՂԴ (1644) Խիզան ընդօրինակուած, Խիզանցիին ձեռքով, և նուիրուած Ս. Յակոբի վանքին. այս յիշատակարանի համաձայն. «...նաև զեղկելի գրիչս յիշեցէք. որ ի Հիվնա առեալ բերի Համիթ քաղաք. տուի արծաթել ողորմութեամբ Ֆի. և առեալ հասուցի ի Սուրբ Քաղաքս Երուսաղէմ». 8⁰— Ճաշոց և Աւետարան Ս. Ծննդեան վանքին մէջ ընդօրինակուած. ՌՂԵ (=1646) թուին, առաջինը Պարոնտէր պատրիարքի համար (ՄՁ. Թ. 15). 9⁰— Նարեկ մը, ՌՂԶ (=1647) թուին, (ՄՁ. Թ. 1438). 10⁰— Աւետարան, Խիզան ընդօրինակուած, նոյնին կողմէն, եւ նուիրուած նախ Ս. Փրկչի և ապա Ս. Հրեշտակապետաց, ՌՂԸ (=1649) թուին, 11⁰— Տօնացոյց, Շարական Եյլն. 1653ին հետեւեալ յիշատակարանով, «...ձեռամբ Խիզանցի Յովհան գրչի. ի վայելումն որդւոյ իւրոյ Սեթայ, յերուսաղէմ, ի Ս. Ծննդեան վանս. ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, ի թվ. ՌՃԲ (=1653). ի հայր. Փիլիպպոսի և ի պատր. Եէմի. Տէր Աստուածատրոյ. ի կաթ. Սսոյ Տէր Ներսէսի, և Աղթամարոյն Տէր Ստեփաննոս կաթ·ի. «....յիշեցէք զեղուկ գրչակս և զհոգեւոր և զմարմնաւոր ծնողսն մեր և զմիաբան Ս. Ծննդեան ուխտիս, զտէր Դաւիթն, զտէր Պետրոս ժամարարն, զտէր Ղազարն և զհերպեն Դասպարն և զվիակեց Դասպարն և զորդին իմ զփոքրիկ Սէրն, որոյ զՇարակնոցն գրեցի ի վայելում նորա։...) (ՄՁ. Թ. 1403). 12⁰— Աւետարան 1655ին, որուն յիշատակարանին կարեւոր մասը հոս կ'ընդօրինակենք. «...դարձեալ Ա.Ծ. ողորմի ասացէք ստացողի Ս. Աւետարանիս Յովհաննէս գրչիս որ ի թվին ՌՀԴ (=1625) եկայք ի սուրբ Երուսաղէմ և այսքան տարիս զվանաց արհնութեան նամակներն կու գրէաք որ յամ. երկիր կու յուղարկեն ի մխիթարութեան պատճառս, կա՛ որ ողորմութիւն է յուղարկած, թէ հասաւ ձեր ողորմութիւն, և կա՛ որ յորդորանք է վասն սուրբ տանս դատաստանի? որ դան յերկրպագութիւն լուսաբուղխ սուրբ գերեզմանին և ամ. սուրբ տնօրինականացս Ֆի.։ Թվին ՌՃԵ